

հնարաւոր մեղադրանքների հակիրճ, սեղմ և պարզ ամփոփումն է գործնականութեան գրոշմով թաթախուած:

Մուսայի արտասանած հետեւեալ տողերի մէջ տաղանդի և գեղեցկի տեսութիւնն է ամփոփուած.

Ատուածային հզօր ձիրքով
Այս ցած կեանքից հեշտ ու անթի
Թռչել երկինք, վերև՝, վերև՝,
Յաւեր, հոգսեր ողջ մտածնալ,
Դժոխք իջնել, դրախտ դնալ,
Անհուն զգալ, թովիչ երգել . . .

Բովանդակալի այս հատուածը մեզ ստիպում է մի փոքր աւելի երկար կանգ առնել այն իրական-կենսական երևոյթների վրայ, որոնք ընդհանրացուել են սրա մէջ. իւրաքանչիւր տողը, մինչև անգամ իւրաքանչիւր բառը մի գարմանալի վարդևա տեխնիկայի չնարհիւ ամբողջ աշխարհ է մեր առաջ քայ անում՝ մերկացնելով գեղարուեստական օտեղծագործութեան հիմնական աղ-գակների — տաղանդի և գեղեցկի ներքին էութիւնը:

Աւելի պարզ խօսելու համար մենք ստիպուած ենք այդ վեց տողի մէջ արտայայտուած ներդաշնակ ամբողջութիւնը բաժանել իւր բաղկացուցիչ մասերի վրայ, այդպիսով կհեշտանայ վերլուծման աշխատանքը:

(շարունակելի)

Ա. Տէրտէրեան

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ՆՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1840—1911).

շարունակութիւն

Համաձայն իւր արած որոշման Աղայեանը 1862-ի ամառուայ սկզբին իւր մտերիմ ընկեր և արհեստակից Միքայէլի հետ ճանապարհուում է դէպի հիւսիս:

Գնում են երկու երիտասարդներ, երկուսն էլ յաջողութեան յոյսերով լցուած, երկուսին էլ առաջնորդում է ապագայի վառ արշալոյսը: Միքայէլը գնում է իւր արհեստը կատարելագործելու, իսկ Ղազարոսը՝ գիտութիւն ձեռք բերելու: Գնում են առանց բաւարար նիւթական յարմարութիւնների: Նոքա նոյնիսկ որո-

շեալ տեղը՝ Ռուսաստանի «մայրաքաղաք» Մոսկվան հասնելու համար անհրաժեշտ ճանապարհածախքը չունին. բայց դարձեալ անվախ կերպով շարունակում են իրենց ճանապարհը, որովհետեւ որոշել էին, և այդ որոշման յաջող հետեանքի մասին չէր կարող լինել և ոչ մի կասկած։ Սակայն գիտենք, որ մարդկանց վճիռների հանդէպ կեանքն էլ իւրն է դնում, համաձայն ուսուսկան «человѣкъ предполагаетъ, а Богъ располагаетъ» առանձին։ Եւ կեանքի այսպիսի բաղմաթիւ հակավճիռներն անսպաս են լինում մեր ճանապարհորդների համար։ Յիշենք դրանցից մէկը. — Թէոդոսիա հասնելիս, — չմոռանանք ասել, որ բաւական երկար տարածութիւն արդէն ոտքով էին անցել մինչև այդտեղ հասնելը, այլ ևս գրպաններում ոչ մէկը ոչ մի կոպէկ չունէր։ Անծանօթ երկիր. ոչ ոքի գիմել, ոչ ոքից խնդրել չէին կարող. և միթէ Ղազարոսի ինքասիրութիւնը թոյլ կտար խնդրել, թէուզ նոյն իսկ աւելի նեղ բոսէում։

Բայց ճշմարտամից աղատուելու համար հարկաւոր էր ժամանակաւորապէս միայն կանգ առնել մի տեղ, որով և ամեն ինչ կը կանոնաւորուէր։ Այդպէս էլ արւում է. նրանք որոշում են մնալ Թէոդոսիայում ու իրենց արհեստը բանեցնել։ Այժմ պէտք էր որոշել, թէ ուր գնան, ում գիմեն, որպէսզի գործ ճարեն։ Միանգամայն հասկանալի հոգեբանութեամբ նրանք գիմում են հայ շրջաններին, ուր և յաջողւում է առանց առանձին դժուարութիւնների։

Դա Գաբրիէլ վարդապետ Այվազովսկու տպաբանն էր, ուր հրատարակում էր «Մասեաց աղաւնի»-ն։ Այս յաջողութիւնը Աղայեանի և Միքայէլի համար ուղղակի գիւտ էր։ Ամբողջ ամառ տպարանում աշխատելուց յետոյ նրանց յաջողւում է մի համեստ գումար յետ ձգել ճանապարհը շարունակելու համար։ Բաղմաթիւ նման դժուարութիւնների յաղթելուց յետոյ, նրանք նոյեմբերի կէսերին հասնում են Մոսկուա, արդէն բոլորովին յոգնած ու քայքայուած։ «Հաց չունինք», ասում է Միքայէլը։ «Ինչ անենք, թէ հաց չունինք» ասացի ևս, «Երեւակայիր որ շատ հաց ունինք և քեզ բոլորովին կուշտ կզգաս, գրում է Աղայեանը իրենց մասին։ Սակայն խնդիրն արդէն լուրջ վերաբերմունք էր պահանջում։ Բայց Ղազարոսը, եթէ չասենք փոքր ի շատէ օրինաւոր հագուստ, նոյնիսկ կօշիկ չունէր, որ կարելի լինէր քաղաքում որ և է տեղ գնալ։ Միայն մի հնար կար, որը և գործադրում է — Ղազարոսը, հանգնում է Միքայէլի կօշիկները, որոնք միայն երեսունէին, խնդրում է սայլապանի վերկուն և քայլերնուղղում դէպի Ղազարեան ճեմարանի տպարանը։

Այստեղ ևս յաջողւում է նրանց ժամանակաւոր գործ ճարել, որն իրօք ժամանակաւոր էլ լինում է։ Մի բան, որ Ղազարոսին

շատ է յուսահատեցնում՝ դա տեղական հայերի անտարբեր վերաբերմունքն էր դէպի ազդութիւնը և վերջինիցս խորթացած լինելը: Նոյն իսկ նա նկատում է, որ այդտեղ հրատարակւող «Հիւսիսափայլ»-ը և «Ծոփաքաղ»-ը չեն մտածում հեռաւոր հիւսիսում ազգային դադափարի անհեցմանը դարկ տալ, ինչպէս որ այդ անում էր «Կոունկ»-ը Թիֆլիզում: Գրական գործի գլուխ կանգնածները միանգամայն հիասթափեցնում են Ղազարոսին իրենց անմիաբանութեամբ և բանբասասիրութեամբ: Նա տեսնում է, որ հայ ուսանողութիւնը, որից օգտուելու մեծ յոյսեր անէր, նոյնպէս ժամանակը վատնում է կանանց յետեից թրև գալով ու զանազան կաֆէշանտաններ յաճախելով:

Ահա մի ցաւ, որով դեռ մինչև աժմ էլ դժբախտաբար շատ ուսանողներ են բռնուած:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Մոսկվայի հայ հասարակութիւնը: որից շատ բան էր սպասում Ղազարոսը, ոչնչով չի կարողանում վեցջինիս բաւարարել, և նա դիմում է օտար՝ ուրա, լին շրջանների օգնութեանը: Ռուս ուսանողութիւնը ունենալով աւելի պարզ հոգի և լայն սիրտ, կարողանում է գիտութեան ծարաւով տոչորւող մի օտարերկրացու իւր մէջ առնել, ցոյց տալով սրտազին և գաղափարական վերաբերմունք: Ղազարոսն սկսում է մասնակցել մի խումբ ուրա ուսանողների կազմակերպած դասախօսութիւններին, որոնք մեծ չափով օգնում են նրան և առաջին անգամ սէր դարձեցնում Ղազարոսի մէջ դէպի մանկավարժական գիտութիւնները: Սակայն երկար չի վիճակւում Ղազարոսին մնալ այդ շրջանում, որովհետև հետզհետէ աւելի մօտիկից ծանօթանալով և մտերմանալով նրանց հետ, նկատում է որ այլևս ոչնչով յետ մնալ չի կարող նրանցից: Ռուս ինտելիգենցիան որն ըստ իւր ներքին հոգեկան խառնուածքի ընդհանրապէս գիտէ գործի ժամանակ գործ անել և ուրախանալու ժամանակն էլ ուրախանալ, շատ հետու է տանում Ղազարոսին իւր կենսական դուարձութիւնների մէջ, որն այդչափ առաջ գնալը իւր ոյժերից վեր և նստատակից դուրս տեսնելով, սկսում է յետ մնալ և վերջն արդէն բոլորովին ձանձրանալով, որոշում է թողնել Մոսկվան. մանաւանդ, որ Ս. Նազարեանի հետ, որի տպարանում Ղազարոսն աշխատում էր, յարաբերութիւններն արդէն լարուել էին:

1864-ի վերջերին Ղազարոսն արդէն Պետերբուրգումն էր: Եւ այն ինչ որ նա չկարողացաւ գտնել Մոսկվայի հայ շրջաններում, յաջողուեց այստեղ՝ Պետերբուրգում, ուր հանդուցեալ Կ. Եզեանի ջանքերով հայ ուսանողներից կազմուել էլ մի գրական շրջան, որը իւր մեծ ազդեցութիւնն ունեցաւ իւր բոլոր անդամների վրայ: Այս գրական շրջանն է ահա, որից այնքան մեծ

չափերով օգտուում է Ղազարոսը, և որն այնքան մեծ հնարաւորութիւն է տալիս վերջինիս իւր ինքնազարգացման գործին նուիրուելու: Այս գրական շրջանի մէջ, երբ Ղազարոսն առաջին անգամ կարդում է իւր «Արութիւն և Մանուէլ» վէպը, ամեն կողմից հիացմունքի ձայներ են լսում, և բոլորն արդէն սկսում են առանձին ուշադրութիւն դարձնել ապագայ խոստացող երկտասարդի վերայ և դիւրութիւններ ստեղծել, որպէսզի նա իւր ունեցած ընդունակութիւնները հնարաւոր եղածին չափ զարգացնել կարողանայ, թէև «ոմանք», ասում է Ղազարոսը «այն միտքը տարածեցին ընթեցող հասարակութեան մէջ, որ իբր թէ իմ աշխատութիւնը մի պատերազմ է յայտնում հին գաղափարների, հին գաստիարակութեան դէմ, որոնց վրայ չի ողբում, այլ յարձակում է անխնայ և նրանց տեղը տարածում նորը և լաւագոյնը»: Այսպիսով արդէն Ղազարոսի անելիքը միանգամ ընդ միշտ որոշւում է, և նա սկսում է բռնած ուղղութեամբ անշեղ կէրպով առաջ գնալ, կրելով իւր վրայ «հեղինակ» անունը: Այնուհետև նրան մնում էր ապացուցել, որ ինքը այդ անուան իսկական և արժանի տէրն է, ինչպէս և լինում է: Սակայն այս բոլորը շատ քիչ էին նրա անյադ ծարաւի հանդէպ, որը մղում էր նրան սխտեմատիկ բարձրագոյն կրթութիւն ստանալ՝ համալսարան մըտնել: Դժբախտաբար նրան այդ չի յաջողւում, և նա անձնատուր է լինում գրագարան-ընթերցարաններ, ազոտ գասախօսութիւններ, գրական երեկոններ յաճախելուն:

1867-ին երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսը Պետերբուրգ էր գնացել կայսեր ներկայանալու: Նա վաղուց մտադիր էր էջմիածնի տպարանը կանոնաւորել, և երբ նա այս մտադրութիւնը յայտնում է Պետերբուրգում՝ Կ. Եղեանը խորհուրդ է տալիս կաթուղիկոսին այդ գործի համար հրաւիրել Աղայեանին, որը յանձն է առնում: Էջմիածին գալով, նա որպէս տպագրական տեխնիկային մօտիկից ծանօթ մարդ, անմիջապէս ձեռնարկում է հիմնարկութեան կանոնաւորմանը և շուտով «Արարատ»-ի խմբագրի օգնականի պաշտօն ստանձնում:

Այնուհետև Ղազարոսը ուսուցչութիւն, տեսչութիւն է անում զանազան քաղաքներում՝ Ախլցխայում, Ալէքսանդրապօլում, Երևանում, Շուշիում և այլն: Նրա դօրեղ և հաստատուն ընաւորութիւնն ամենից բաւելի աչքի զարնող չափերով արտայայտւում է այն ժամանակ, երբ նա Ղարաբաղի թեմական դպրոցում հանգուցեալ Սեդրակեան սրբազանի առաջնորդութեան օրով տեսչի պաշտօն է ստանձնում: Ահա թէ ինչ էր ներկայացնում իրենից Շուշին այդ ժամանակ. «Շատ էր դժուար Շուշի քաղաքում մի բարոյական նախագիծ իրագործելը: Այդ քաղաքում չկար ձգտումն

դէպի ազնիւն ու վսեմը: Ինչ որ չէր համարուել, չէր կշռուել, չէր դնահատուել դրամի յայտնի քանակութեամբ, դրանց համար դոյութիւն չունէր: Աշակերտների մէջ երևում էր ծնողաց նիւթապաշտական յատկութիւնը: Ֆիզիքապէս առողջ լինենով, ուժեղ էին և մտքով, թէ տղայք և թէ աղջկէք: Բայց շատ դժւար էր դրանց իդեալիստ շինել...

Շուշի քաղաքը մտնառաջահ չլինելով ամեն տարի խախալւում էր, խարրաւում. սաղերն ու տուղները դուրս են դնում, քաղաքում մնում են փուչն ու տականքսի մանրունքը: Ես գործունէի փուչի չեմ և սրա համար էլ նահատակւում էի չարաչար: Դաւադարութիւնը թէ ներսից և թէ դրսից էր, և այնպէս բարդ էր, որ դրանց բոլորի առաջն առնելու համար պէտք էր մի առանձին խորհրդարան: Այս պատժառով ևս այնքան դրադուած էի, որ ինչպէս կասեն քիթ սրբելու ժամանակ չունէի և ոչինչ չգրեցի բացի մի «Անահայից» և մի «Թեմական տեսչից», որ «Մեղի» մէջ տպւեց կիսատ պաատ:

Ահա այս էր Շուշու մթնոլորդը, ուր Ղազարոսին վիճակուած էր կրթական գործի գլուխ կանգնել: Այս բոլոր դժուարութիւնների վրայ դեռ պէտք է տւելացնել այն հանգամանքը, որ նրա նախորդ տեսչի՝ Բարաջանեանի խումբը «տակն ու վրայ էր արել, քաղաքը խռովութեան մէջ գցել և հաւատացրել, որ իրենից յետոյ այլ ևս քար քարի վրայ չպիտի կանգնի, դպրոցը պիտի փակուի»: Ահա թէ որքան խոչընդոտներ էին կանգնած տեսուչ Ղազարոսի ճանադարհին: Ընտանիքների անկույտութեան և անհետաքրքրական լինելու վրայ, որի անմիջական ազդեցութեան տակ էր նրանց երեխաների մտաւոր ու հոգեկան աշխարհը, ինչպէս տեսնում ենք, տւելանում էին մի խումբ քախատախնդիրների ինտրիգներն ևս, որոնք ժողովրդի դէպի դպրոցական գործն ունեցած հետաքրքրութեան թուլացման պատճառ էին դառնում: Այստեղ էր, որ Ղազարոսը պէտք է թէ ներսում՝ դպրոցի մէջ, և թէ դրսում՝ հասարակութեան մէջ ամէն կերպ ցոյց տար աշակերտութեանն ու նրանց ծնողներին դպրոցի բարձրութիւնը, թայֆականութեան՝ անմիաբանութեան կործանարար դերը այդ խնդրում: Եւ իրօք, ուսուցչի պաշտօնն այսպէս էլ գործադրել է Ղազարոս: Նրա հայեացքով ուսուցիչը չպէտք է պարփակուի դպրոցի չորս պատի մէջ, այլ նա իւր պարտականութիւնը պէտք է համարի և այն ընտանիքների կրթութեամբ հետաքրքրուելն ու դրադուելը, որտեղից դուրս է գալիս դպրոցի աշակերտութիւնը, քանի որ հենց դպրոցական գործի յաջողութեան նկատմամբ ճակատագրական նշանակութիւն ունի ընտանիքը:

Սակայն այս հանգամանքը երբէք չպէտք է ծայրահեղութեան

հասցնել, դառնալով ժողովրդի համար պրոպագանդիստ, ինչպէս չէր անում նաև ինքն Աղայանը: Նա իւր ինքնաշխատութեամբ և անձնական փորձով մանկավարժական այնպիսի հմտութիւն էր ձեռք բերել, որ իր պաշտօնակիցներից նոյն իսկ նրանց, որոնք դարգացմամբ, դիտական պատրաստութեամբ շատ աւելի բարձր էին կանգնած քան ինքը, առաջնորդել կարող էր, ինչպէս տեսնում ենք պ. Ս. Մանդինեանի վերաբերմամբ Շուշիում պաշտօնավարելիս. (այս փաստը ինքը Աղայեանն է տալիս իր ինքնակենսագրութեան մէջ):

Շուշիի ուսուցչութիւնը նրան չափազանց յոգնեցնումէ, և թիֆլիս վերադառնալով նա մտածում է բոլորովին թողնել ուսուցչական տապարէզը: Սակայն մի անսպասելի յաջողութիւն գալիս է երկուստեք բաւարարելու նրան. դա տիկին Սոփիա Բարայեանի թիֆլիզում բաց արած մանկավարտէզն էր, ուր նա դասատուի պաշտօն է ստանձնում: Թէ ինչպէս էր զգում Աղայեանը իրեն այդ բոլորովին նոր շրջապատում, թողնենք որ ինքն ասի. «Ընկալ մանկական պարտէզ, ուր երեխէքը անմեղ հրեշտակների էին նման ուրախ, զւարթ, ինչպէս անհող թռչուններ, որոնք անընդհատ ոտոտստում, թռչկոտում և երգում են իրանց մայրիկի՝ Սոփիայի շորս կողմում, և ես չգիտէի, թէ որից եմ աւելի հիացած, կրթողից, թէ՞ կրթւողներից... Այստեղ ահա ըստ ամենայնի առողջարար շրջանում, կազդուրուեցի ես թէ հոգեպէս և թէ ֆիզիքսպէս...»¹⁾ Ահա այսպիսի մի շրջանում, որ անմեղ հոգիներով էր շրջապատուած նա, ուր ամեն ինչ մանկական քնքշութեամբ այնպէս փայլում, այնպէս յուսադրում էր նրան, շատ բնականօրէն սկսում է մեծ չափերով դարգանալ նրա մէջ դէպի մանուկները տածած սէրը: Եւ իրօք այդ սէրը մեծ ծաւալ է ստանում, միևնոյն ժամանակ առանց թաղնուած մնալու: Ղազարոսը իր հոգեկան ներքին յոյզերից ու զգացմունքներից սկսում է հիւսել անուշաբոյր ծաղկեայ փնջեր իւր մանուկների համար, որպէս վարձատրութիւն նրանցից ստացած սիրոյ ու գուրգուրանքի: Այդ ծաղկեայ փնջերը նրա մանկական ոտանաւորներն էին: «Գրում էի մանկական երգեր և տալիս տիկին Սոփիային, որ այնպէս էր ուրախանում, ինչպէս մի նոր գիւտ արած: Ինձանից ծածուկ էր սովորեցնում երեխաներին և պատուիրում էր, որ ինձ շատեն մինչև լաւ չըպատրաստուեն: Երբ որ լաւ պատրաստուած էին լինում, հաւաքւում էին դահլիճում, դաշնամուրի մօտ, հրաւիրում էին ինձ, բայց չէին կարողանում համբերել մինչև սկսելը, իրար գլխով էին անցնում, ծափահարում և հասկացնել ուղում, որ մի անա-

1) Մարտ 1984 թ. 54 երես.

Լինելու ընծայ պիտի անեն ինձ: Սկսում էր մի ներկայացումն, դուրս էր գալիս մի հրաշալի պատկեր, և ես չէի հաւատում, որ այդ պատկերն իմ նկարածն է, այնքան գեղերկացրած էր լինում տիկինը և կենդանացրած: Այսօրւանից յետոյ ահա ես գլխովին նուիրուեցի մանկական գրականութեան, որնք տաղադրուեցին «Աղբիւրում» մի քանի տարի շարունակ: Այն ժամանակ կազմեցի ես իմ «Ուսումն մայրենի լեզուի» երկրորդ և երրորդ դասագրքերը»:¹⁾

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մանկական պարտէզը խորը և անջնջելի տալաւորութիւն է թողնում Աղայեանի վերայ և դարեւ տալիս նրա շատ ընդունակութիւններէց յատկապէս մէկի՝ մանկական—գրականի զարգացմանը:

Այնուհետեւ դեռ էլի երկար տարիներ՝ մինչեւ մահ Աղայեանը շարունակել է իւր հասարակական, գրական—մանկավարժական գործը միշտ և ամենուրեք ցոյց տալով փայլուն յաջողութիւն, որի մասին յաջորդ անգամ կտանք մեր դիտողութիւնները:

Շառունգակելի

Ա. Բէլ Ա. Բեդալ



ՄԵՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Родство грузинъ съ испанцами». Л. М. Меликсетъ — Бековъ

Այս վերնագիրը կրող գրքուկի առիթով «Մշակ»ի № 166 բանասիրականում պ. Աւան Քալանթարը համառօտում է գրքուկի բովանդակութիւնն ու աւելացնում մի քանի խօսք աղգերի իրար հետ առնչութեան մասին: Ուստի և կարեք չենք տեսնում նոյնը երկրորդէլ ընդարձակօրէն:

Համառօտ տեսնք. գրքուկի նպատակն է ապացուցանել, որ թէև հնումն Սպանիան էլ Վրաստանն էլ Իբերիա, Իվերիա էին կոչւում, սակայն բացի անուանական նոյնութիւնից, այդ երկու աղգերի մէջ չկայ ցեղական կամ լեզուական ոչ մի առնչութիւն:

Գրքուկի մէջ (եր. 23—27) հայերիս համար հետաքրքիր է Մար-Աբաս—Կարինայի միջոցով Արեւդենոսից առած աւանդութիւնը որ Մովսէս Խորենացին պատմում է, (գիրք Բ. գլ. 8) և որ պ. Մելիքսեթ-Բէկեանը այսպէս է առաջ բերում.

1) Մուրճ 1984 թ. 33 երես.